# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2020 թվականի N 33

### ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-043-0013-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ՝ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ "Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 44-րդ հոդվածի 2-րդ կետով, 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ "Ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին" 510-Ն օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հողհատկացման հիմքերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրենքի ուժով 06-043-0013-0004 ծածկագրի տակ գտնվող 0.35864 հա փաստացի օգտագործման հողամասի և բնակելի տան՝ 33.18քմ, բաց պատշգամբի՝ 23.56քմ, ծածկարանի՝ 30.4քմ նկատմամբ վերականգնել և ճանաչել Նադեժդա Ալեքսեեվնա Դոլգովայի /ծնվ. 1944թ./ սեփականության իրավունքը:

2.Վերականգնել և ճանաչել 0.35864 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1961թ-ին կառուցված բնակելի տան՝ 33.18քմ, բաց պատշգամբի՝ 23.56քմ, ծածկարանի՝ 30.4քմ սեփականության իրավունքը /հիմք ընդունելով 2020 թ-ի օգոստոսի 21-ի ժառանգության իրավունքի վկայագիրը/գրանցամատյանում N2845, ժառահգական գործ N128/2020թ./

3,Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4,Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

ՀՀ ԼՄ Լերմոնտովո համայնք 2 փողոց, թիվ 55:

5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

31 օգոստոսի 2020 թվականի N 34

ՖԵԴՅԱ ԱՍԱԴՈՎԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ "Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին" օրենքով, ՀՀ կառավարության 14.04.2004 թ-ի թիվ 457 որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել ՀՀ կառավարության 14.04.2004 թ-ի թիվ 457 որոշմամբ Լերմոնտովո համայնքի 1խճ. թիվ 3/1 հասցեի, 06-043-0023-0005 ծածկագրի 0.006 հա մակերեսով հողամասում 2019 թ-ին կառուցված 21,28քմ ավտոլվացման կետի սեփականության իրավունքը:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման կողմից:

3.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ղեկավարի 21.08.2020 թ-ի թիվ 29 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**